



**«ԱՐՑԱՆ ՀԷԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ**

ՈՐՈՇՈՒՄ

«27» դեկտեմբեր 2010 թ.

N 3-2010/01

ք.Ստեփանակերտ

**«ԱՐՑԱՆ ՀԷԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 84-րդ հոդվածը, «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության կանոնադրության 12.5 կետի ա) ենթակետը և «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության տնօրենների խորհրդի 27.12.2010թ. նիստի 3-2010 արձանագրությունը՝ «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության տնօրենների խորհուրդը որոշում է՝

1. Ընկերության կանոնադրության 6.2 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6.2 Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 7 362.074.000 (Յոթ միլիարդ երեք հարյուր վաթսուներկու միլիոն յոթանասունչորս հազար) դրամ, որը բաժանված է 7 362 074 (յոթ միլիոն երեք հարյուր վաթսուներկու հազար յոթանասունչորս) հատ հասարակ (սովորական) անվանական ոչ փաստաթղթային բաժնետոմսի, յուրաքանչյուրը 1.000 դրամ անվանական արժեքով:

Ընկերության կողմից թողարկված բոլոր 7 362 074 (յոթ միլիոն երեք հարյուր վաթսուներկու հազար յոթանասունչորս) բաժնետոմսերը տեղաբաշխված են, սեփականության իրավունքով պատկանում են բաժնետերերին և լրիվ վճարված են նրանց կողմից:

Ընկերության բոլոր բաժնետոմսերը հասարակ (սովորական) են:

Ընկերության հայտարարված բաժնետոմսերի թիվը կազմում է 7.737.926 (յոթ միլիոն յոթ հարյուր եռեսունյոթ հազար ինը հարյուր քսանվեց) հատ հասարակ (սովորական) անվանական բաժնետոմս՝ յուրաքանչյուրը 1,000 (մեկ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ անվանական արժեքով:

Հայտարարված սովորական բաժնետոմսերի տեղաբաշխումն իրականացվում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կամ տնօրենների խորհրդի՝ դրանց տեղաբաշխման մասին որոշմամբ սահմանված կարգով և ժամկետում:»:

2. Ընկերության գլխավոր տնօրենին՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական ռեգիստրի Ստեփանակերտի տարածքային բաժին ներկայացնել անհրաժեշտ փաստաթղթերը՝ նշված փոփոխությունը օրենքով սահմանված կարգով գրանցելու համար:

Խորհրդի նախագահ՝

Ս. Թևոյան